Կյանքից հեռացել է ԳԱԱ ակադեմիկոս Թինաթին Ասաթիանին

Հուլիսի 18-ին կյանքից հեռացել է ԳԱԱ ակադեմիկոս, Հայաստանում «Իվերիա» վրացական բարեգործական համայնքի հիմնադիր եւ պատվավոր նախագահ Թինաթին Ասաթիանին:

Թինա Լեվանի Ասաթիանին ծնվել է 1918 թվականի մարտի 12-ին, Թբիլիսիում պրոֆեսոր Ասաթիանիի ընտանիքում: Նա Հայաստան է եկել 1943 թվականին ֆիզիկոս Արտյոմ Ալիխանյանի հրավերով՝ մասնակցելու Արագածի կայանում տիեզերական ճառագայթների հետազոտմանը:

Կայծային խցիկների մեթոդիկայի զարգացման գործում մեծ ներդրում ունենալու համար 1970 թվականին Թինա Ասաթիանին եւ Արտյոմ Ալիխանյանը գիտնականների խմբի հետ միասին պարգեւատրվել են Լենինյան մրցանակով:

Թինա Ասաթիանին համահեղինակ է ֆիզիկայում բարձր էներգիաների մասնիկների փոխազդեցության մեթոդիկայի եւ ֆիզիկայի բնագավառում տիեզերական ճառագայթների ավելի քան 150 աշխատանքների, որոնք հրապարակվել են հայրենական եւ արտասահմանյան ամսագրերում:

Թինա Ասաթիանին մեծ ներդրում է ունեցել նաեւ գիտական կադրերի պատրաստման գործում: 1980 թվականին Թինա Ասաթիանին սացել է Հայաստանի ԽՍՀ գիտության վաստակավոր գործչի կոչում, 1994 թվականից Ջորջ Սորոսի հիմնադրամի պատվավոր պրոֆեսոր է: